Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,
62, 63, 64, 65,
66, 67, 68, 69, 70,
71, 72, 73, 74, 75
18

2
L-85

2010

ԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԳԱՐՈՂ

ՏՕՆԱԿԱՆ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹՈՒ.

Տպագրեալ
Հրամանաւ Վեհափառ Տեառն
ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՑ Դ,
Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.

Ի ԹԷՈԴՈՍԻԱ,
Ի Տպարանի Խաչիկեան Ուսումնարանին.

1869 = ՌՅԺԸ.

28723-47

«Եթէ կրնաս ձայնդ բարձրացընել, խօսէ: Եթէ գիրք միայն թողուն քովդ, գրէ: Փողոցին մէջ քարի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան սովրեցուր: Եթէ ձայն չունիս, օրինակ տալու կարողութիւն ունիս: Այս ոչ առաքինութիւն է, ոչ կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ ու յստակ: Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ ա՛յն եղիր՝ ինչ որ է բժիշկը մարմնոյ հիւանդութեանց համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն ցաւագարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգիտաց: Քու Ստեղծողդ կենացդ համարը պիտի պահանջէ քեզնէ: Ցոյսդ մի՛ դներ բացասական առաքինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չընելն է. քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես, մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ, եւ առ Աստուած առաջնորդես: Կեանքն ալ այս է, մարդն ալ այս»:

Ժիւլ Սիմոն,

(Իմաստասէր եւ Քաղաքագէտ Գաղղիացի:)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա. ՍՍՌ
Ս. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ
11413-54

Дозволено Цензурою. Тифлисъ, 30 Октября 1868 г.

ՔԱՐՈԶ ՏՕՆԱԿԱՆ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹՈՒ.

Ո՛վ սքանչելի եւ տեսիլ ահաւոր. զարարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչին»: Շարականին այս կարճ եւ ազդու խօսքովը կծանուցանէ մայրն մեր սուրբ Եկեղեցի իւր զաւակացը այսօրուան ահաւոր խորհուրդը. խօսք մի որ աւելի կնմանի սաստիկ զարմանքէ ու ապշութենէ առաջ եկած լռութեան՝ քան թէ ծանուցման: «Ո՛վ սքանչելի եւ տեսիլ ահաւոր. զարարիչն երկնի եւ երկրի այսօր տեսաք ի խաչին»: Կարծես թէ այս էր արեգական զգածմունքն ալ այսօր (եթէ ունենար զգածմունք), որ սարսափելով խաւարեցաւ. «Տեսեալ զՏէրն ի Խաչին՝ խաւարեցաւ արեգակն». տաճարին վարագոյրը վերէն ի վար ճեղքուեցաւ, գետինը շարժեցաւ, լեռները քարերը կոտրտեցան, գերեզմաններ բացուեցան ու մեռելներ յարութիւն առին: Հաւատացէք, ով հաւատացեալք Քրիստոսի, որ այս կերպ լռութիւնը քան զամենայն խօսք եւ քան զամենայն ճարտասանութիւն պերճախօս է. ուստի եւ ես բաւական

պէտք էր համարէի ձեր միտքը ձգել միայն կարճ խօսքով այս ահաւոր եւ սքանչելի տեսարանը, եւ այնուհետեւ ձեզի թողուլ ամէն խորհրդածութիւն, ու ամէն տեսակ խրատ որ պէտք է առնումք այսօրուան տօնէն:

Բայց ասոր համար ոչ ապաքէն հարկաւոր է ձեզի մոքերնիդ բերել — գոնէ համառօտիւ — այսօրուան խորհրդոյն պատմութիւնը, այսինքն Քրիստոսի Տեառն մերոյ չարչարանացն ու խաչելութեանը պատմութիւնը: Ուրեմն առաջ այն տեսնեմք, եւ յետոյ այսօրուան արարողութեանց բացատրութիւնը տամք, որոց գլխաւորը կհամարուի գիշերային ժամերգութիւնը՝ որ ռամկօրէն կասուի յոմանց ողբի կամ լացի գիշեր, խաւարման գիշեր, տեր մեղայի գիշեր եւ այլն:

Քրիստոսի Տեառն մերոյ մատնութեան պատմութիւնն անելով՝ այն տեղ դադրեցանք՝ որ Հրեայք բռնեցին զՅիսուս, կապեցին զգառն անմեղ իբրեւ չարագործ մի, եւ տարին իրենց քահանայապետին տունը: Այն տարուան քահանայապետն էր Կայիափա, բայց նորա անները Աննա իւր քահանայապետ անունը ձգած չլինելով՝ առաջ նորա բնակարանը տարին զՅիսուս:

Յիսուսի աշակերտներէն մէկը, որ Յովհաննէս աւետարանիչը կկարծուի, քահանայապետին հետ ճանչուորութիւն ունէր. ուստի կրցաւ Յիսուսի ետեւէն մտնել մինչեւ քահանայապետին գաւիթը, այսինքն բակը կամ ազպարը: Նա տեսնելով որ Պետրոս առաքեալը հեռուանց Յիսուսի ետեւէն գալով՝ դռնէն դուրս կեցեր է, դռնապանին խօսք անցուց ու ներս առաւ զՊետրոս:

Քահանայապետին ծառաներն ու սպասաւորները բակին մէջ կրակ վառած կտաքնային, եւ ինչպէս որ բնական էր՝ Յիսուսի բռնուելուն վերայ կխօսէին իրարու հետ. Պետրոս ալ նոցա հետ կեցած կտաքնար, եւ առանց նոցա խօսակցութեանը մէջ մտնելու՝ կմտածէր արտում տխուր՝ թէ այս բաներուն ծայրը արդեօք ուր պիտի երթայ:

Աննա քահանայապետը այնպիսի հարցմունքներ արաւ Յիսուսի որ կարենայ բերնէն խօսք մի առնուլ Մովսէսի օրինացը դէմ, եւ կամ Հռովմայեցւոց կայսերական օրինացը հակառակ, եւ անով պատճառ գտնէ մահապարտ վճռելու զՅիսուս: Իսկ Տէրն մեր պատասխանեց թէ Ես ինչ որ քարոզեր եմ՝ յայտնապէս քարոզեր եմ ժողովրդոց մէջ ու տաճարը. այնպիսի բան մի չեմ ասած որ հարկ լինի ծածկել կամ պահել. ինձի ինչու կհարցնես. լսողներուն հարցուր, թող նոքա վկայեն: Նա որ այն խօսքն ասաց, այնտեղ կեցող սպասաւորներէն մէկը ապտակ (շամար) զարկաւ Յիսուսի՝ ասելով. «Այդպէս պատասխանի տաս քահանայապետիդ». — Քահանայապետ մարդ ու պատասխանն այդ կերպով կուտաս: Յիսուս դարձաւ ասաց այն յանդուգն ծառային. «Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին. իսկ եթէ բարի, ընդէր հարկանես զիս». այսինքն, թէ որ ասածս ծուռ կամ

գէշ բան է, ու քեզի կհարցընեն, վկայութիւն տուր ծուռ լինելուն. իսկ եթէ շիտակ ու բարի բան է ասածս, ինչու՞ կզարնես ինձի, եւ ինչ իշխանութեամբ։ Այս խօսքը քահանայապետին ալ մեծ յանդիմանութիւն էր. բայց շատ անգամ մեծերը իրենց ծառաներուն ու շողոքորթներուն լրբութեանը իրենք պատճառ կլինին. ո՞վ կրնայ խղճմտանքի բերել զանոնք որ սատեն այնպիսի սպասաւորաց։

Աննա քահանայապետը չարձրկեց Յիսուսի անիրաւ կապանքը, այլ նոյնպէս կապած յուղարկեց իւր փեսին՝ Կայիափայի, որոյ տունը ժողվուած էին դպիրներն ու ծերերը. յետոյ ինքն ալ գնաց, ու խորհուրդ կանէին թէ ինչպէս գտնեն քանի մի սուտ վկայութիւններ որ սպաննեն զՅիսուս։ Որը այս կասէր՝ որը այն, բայց մէկուն վկայութիւնն ալ միւսին չէր նմաներ։ Վերջապէս երկու սուտ վկաներ առաջ անցան ու ասին. Մեք լսեցինք դորա ասածը թէ ես կարող եմ այդ տաճարը որ մարդու ձեռքովը շինուած է՝ քակել, եւ երեք օրուան մէջ մէկ ուրիշը շինել՝ առանց ձեռագործի։ Բայց դարձեալ երկուքին վկայութիւնը մէկմէկու նման չէր. թող որ Յիսուս չէր ասած թէ ես պիտի քակեմ այդ տաճարը, հապա թէ Դուք քակեցէք, կամ պիտի քակէք, ու ես երեք օրուան մէջ պիտի կանգնեմ. այն ալ ոչ թէ նիւթական տաճարին համար էր, հապա իւր մարմնոյն մահուանն ու երեքօրեայ յարութեանը համար։

Այն տեղն քահանայապետը գոռոզութեամբ ու սուտ ծանրութեամբ ոտք ելաւ, առաջ անցաւ եւ ասաց Յիսուսի. «Զտա՞ս ինչ պատասխանի. զինչ դոքա ամբաստանեն զքէն».—Պատասխան չեմ տար. տես դոքա ինչեր կասեն քեզի համար։ Յիսուս լուռ կեցաւ, ամենեւին պատասխան չտուաւ, վասն զի կտեսնէր մէկ կողմանէ սրտագէտն՝ որ քահանայապետին հարցմունքը բոլորովին կեղծաւորական էր, եւ ամենեւին այն չէր միտքը որ ընդունի իւր պատասխանն ու արդար դատաստան կտրէ. միւս կողմանէ վկաներուն ասածները յայտնապէս հակառակ լինելով մէկմէկու՝ աւելորդ էր անոնց ստութիւնը յանդիմանելը։

Յիսուսի լռութենէն առնուած՝ պէս եղաւ ամբարտաւան քահանայապետն ու նորէն հարցուց անոր. Աստուծոյ կենդանւոյ անունովը կերդուընցընեմ զքեզ. ասա մեզի, դո՞ւն ես մեսիան՝ ամենաբարի Արարչին Որդին, ինչպէս որ շատ մարդիկ կասեն. «Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասացես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ օրհնելոյն»։ Յիսուս արժան համարեցաւ պատասխան տալ քահանայապետին այն խօսքին՝ միայն անոր համար որ Աստուծոյ անուամբը կստիպէր զինքը. բայց այն պատասխանն ալ եղաւ յիրաւի աստուածային պատասխանի՝ որ կայծակի պէս զարկաւ կեղծաւոր քահանայապետին սրտին. Դուն քու բերնովդ մտքիդ վկայածը խոստովանեցար. «Դու ասացեր». եւ իսկոյն վրայ բերաւ թէ Բայց դուք իմ ճշմարտապէս Որդի Աստուծոյ լինելս այն տեղն պիտի հասկընաք՝ երբոր

երկրորդ անգամ աշխարհք կուգամ ամպերուն վերայ հայրական փառաք, եւ ոչ թէ այսպիսի խոնարհական ու խեղճ կերպարանաք։ Քահանայապետին լսել ուզածն ալ այսպիսի խօսք մի էր. մէկէն պատռեց իւր վերայի հագուստն ու աղաղակեց. «Հայհոյեաց. զի՞ եւս պիտոյ են մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյութիւն դորա, զինչ հաճոյ է ձեզ». — Ահա հայհոյութիւն արաւ. այսուհետեւ վկայ ինչ հարկաւոր է մեզի. դուք ալ լսեցիք դորա հայհոյութիւնը. ինչ կասէք։ Նոքա մէկ բերան պատասխանեցին թէ «Մահապարտ է»։ Արձակեցին ժողովը, եւ զՅիսուս յանձնեցին սպասաւորաց ու զինուորաց որ պահպանութիւն անեն անոր մինչեւ առաւօտ։ Իսկ նոքա ըստ սովորութեան անգութ եւ ամբարիշտ մարդոց, որ զուարճութիւն կհամարին իրենց՝ չարչարել ու ծաղր անել անմեղներն ու խեղճերը, գուցէ նաեւ իրենց մեծերուն յորդորանաքը, ամէն տեսակ նախատական խօսքեր կասէին Յիսուսի. կթքնէին պիղծ բերանով նորա աստուածային երեսը, եւ գլխուն կզարնէին բռընցի (եռմուխներով). երեսը լաթ մը կձգէին որ չտեսնէ, ու զանազան տանջանքներ տալէն ետեւ՝ ապտակներ կիջեցընէին երեսին ու կասէին. Դու մեսիան չես մի. մարգարէացիր տեսնեմք, ո՞վ էր քեզի զարնողը։

Այն միջոցին Պետրոս վարը՝ տանը բակին մէջ սպասաւորներուն հետ նստած կսաքնար։ Ինչ փորձանքաւոր բան է չար մարդկանց ընկերութենէն չզգուշանալը, հեռու չփախչիլը։ Քահանայապետին

դռնապան աղախինն եկաւ մօտեցաւ քովը, նայեցաւ երեսն ու ասաց. Դու ալ Յիսուսի Նազովրեցւոյ հետն էիր. կերեւի որ նորա աշակերտներէն ես։ Պետրոս ամենուն առջեւն ուրացաւ ու ասաց թէ ես այն մարդը ամենեւին չեմ ճանչնար, ո՞վ կնիկմարդ, եւ չեմ գիտեր թէ ինչ ասել կուզես։ Այս խօսքէն ետեւ դրսի բակն որ ելաւ, աքաղաղը խօսեցաւ։ Դռնէն դուրս ելած ժամանակը ուրիշ աղախին մի տեսաւ զՊետրոս ու ասաց քովիններուն. Սա ալ Յիսուսի Նազովրեցւոյ հետն էր։ Մարդուն մէկը հարցուց խակոյն Պետրոսի՝ թէ Յիրաւի դուն ալ այն մարդուն աշակերտներէն մէկն ես։ Նորէն ուրացաւ Պետրոս, ու երդում անելով ասաց թէ ես այն մարդը չեմ ճանչնար։ Մէկ ժամէն ետեւ քովի մարդիկը դարձան ասին իրեն. Յիրաւի դուն ալ ի նոցանէ ես. վասն զի գալիլիացի ես, ինչպէս որ խօսակցութեանդ ռամկական կերպերէն յայտնի է։ Ծառաներէն մէկն ալ, որ ազգական էր այն Մաղքոսին՝ որոյ ականջը կտրեր էր Պետրոս, ասաց. Ո՞չ ապաքէն ես իմ աչքովս տեսայ պարտիզին մէջ որ դուն նորա հետն էիր։ Այն ատեն Պետրոսին ճարը հատած՝ սկսաւ ասել թէ Աստուած ինձի այսպէս եւ այնպէս անէ՝ թէ որ հասկընամ թէ ինչ ասել կուզէք. երդում կանեմ որ ձեր ասած մարդը ես ամենեւին չեմ ճանչնար։ Խօսքը դեռ բերանն էր, աքաղաղը երրորդ անգամ խօսեցաւ, ինչպէս որ Յիսուս գուշակեր էր։ Այն ատեն դարձաւ մարդասէր Փրկիչն մեր ու նայեցաւ ներսէն Պետրոսի վերայ։ Իսկոյն Պետրոսի միտքն

ընկաւ Յիսուսի խօսքը, դուրս ելաւ ու դառն արցունքներ թափելով՝ լացաւ չարաչար որ այնպէս անզգոյշ եւ ապերախտ գտնուեցաւ իւր սիրելի վարդապետին դէմ ու սնոտի վախէն յաղթուած ուրացաւ զինքը։

Ուրբաթ առաւօտը լուսանալուն պէս՝ ժողվուեցան Հրէից քահանայապետներն ու բոլոր գլխաւորները, վճռեցին որ սպաննեն զՅիսուս, եւ միայն իբր թէ դատաստանի կարգը տեղը տանելու համար՝ իրենց ատեանը բերել տուին զինքն ու ասին. Թէ որ մեսիան դուն ես, ասա որ գիտնամք։ Պատասխանեց Յիսուս. Եթէ ասեմ ձեզ թէ ես եմ, գիտեմ որ պիտի չհաւատաք. եւ եթէ հարցընեմ թէ ինչ բանի համար բռնեցիք զիս, կամ թէ յանցանքս ինչ է, ամենեւին մտիկ պիտի չանէք, եւ զիս արդէն դատապարտած լինելով՝ պիտի չարձակէք. բայց միայն այսքանս ասեմ ձեզի որ այսուհետեւ զիս պիտի տեսնէք Հօր Աստուծոյ աջ կողմը բազմած։ Կանչեցին ամէնքը միաբերան եւ ասին. Թէ որ այդպէս է՝ դուն ես Աստուծոյ Որդին։ Յիսուս պատասխանեց. Դուք ձեր բերնովը կասէք ճշմարիտը։ Այն ատեն սկսան կանչուրտել ամէնքը թէ Ուրիշ ինչ վկայութիւն պէտք է մեզի. մեր ականջովը լսեցինք որ խոստովանեցաւ՝ թէ ինքը հայհոյիչ է օրինաց։

Ելան ամէնքը մեծ բազմութեամբ, կապեցին զՅիսուս եւ առին տարին Պոնտացի Պիղատոս դատաւորին՝ որ հռովմայեցի էր ազգաւ, եւ Հռովմայեցւոց տէրութեան կողմանէ Հրէաստանի Գործակալ, կամ

Երուսաղեմի Կուսակալ։ Հրեաները ներս չմտան, իբր թէ այն մտքով որ հեթանոսի տունը ոտք կոխելով չպղծուին, ու կարենան սրբութեամբ ուտել իրենց զատկական գառը։ Կատարեալ փարիսեական կեղծաւորութիւն ու հրէական խղճահարութիւն։ Այն չէին նայեր որ իրենք՝ մէկ երկու ժամ առաջ՝ ընդդէմ օրինաց խորհրդի նստեր ու մահու դատաստան կըտրեր էին, եւ կվախնային որ հեթանոսի տուն մըտնելով չպղծուին։—Պիղատոս դուրս ելաւ ու հարցուց Հրէից գլխաւորներուն թէ ինչ գանգատ կամ ինչ ամբաստանութիւն ունիք այդ մարդուն դէմ։ Նոքա լրբութեամբ պատասխանեցին. Թէ որ այն մարդը չարագործ չլինէր, չէինք մատներ զինքը քու ձեռքդ։—Ուրեմն, ասաց Պիղատոս, առէք զինքը ձեզի, ձեր օրէնքովը տեսէք դորա դատաստանը։ Հրեայք պատասխան տուին թէ Մեք իշխանութիւն չունիմք մարդ մեռցընել տալու։ Մեք այս մարդը գտանք որ մեր ազգը մոլորցընելու ետեւէ է. այն բաւական չէ, չթողուր որ կայսեր տրուելու տուրքը վճարեմք, եւ կասէ թէ ինքը մեսիան է, ուստի Թագաւոր է։ Նորէն ներս մտաւ Պիղատոս, հարցուց Յիսուսի թէ Դու Հրէից Թագաւորն ես։ Յիսուս պատասխանեց. Բեղնէ՞ կասես այդ բանը թէ ուրիշներն ասին քեզի։—Մի՞թէ ես ալ Հրեա՞յ եմ, ասաց Պիղատոս, որ ձեր ազգին բաները գիտնամ, կամ մեսիային ով լինելուն տեղեկութիւն ունենամ. քու ազգդ ու քահանայապետներդ են զքեզ իմ ձեռքս տուողները. ուրեմն ասա՝ ինչ գործի տէր ես դուն։—«Իմ արքայութիւն չէ

յայսմ աշխարհէ» պատասխանեց Քրիստոս. իմ թագաւորութիւնս այս աշխարհին վրայ չէ. թէ որ ես այս աշխարհիս թագաւորը լինէի, իհարկէ սպասաւորներ կունենայի ինձի համար կռուրտող՝ որ Հրէից ձեռքը չընկնիմ: Պիղատոս պատասխան տուաւ թէ Ուրեմն դու թագաւոր մի ես։— Դուն քու բերնովդ կվկայես որ թագաւոր եմ. բայց ես այս միայն ասեմ թէ ես աշխարհք եկեր եմ ճշմարտութիւնը քարոզելու համար. ուստի ով որ ճշմարտութեան կողմն է՝ նա իմ խօսքս մտիկ կանէ: Պիղատոս՝ որ պաղ եւ թեթեւամիտ հեթանոսին մէկն էր, հեգնական կերպով հարցուց Յիսուսի թէ «Ի՞նչ է ճշմարտութիւն». — Ճշմարտութիւնն ինչ բան է.—եւ առանց պատասխանին ալ սպասելու՝ նորէն ելաւ ասաց Հրէից թէ «Ես չգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ». — Այս մարդուն վրայ յանցանք մի չեմ գտներ։ Քահանայապետներն ու ծերերը շատ չարախօսութիւններ արին Յիսուսի վրայ, բայց նա պատասխան չտուաւ։ Պիղատոս դարձաւ հարցուց Յիսուսի թէ Պատասխան չե՞ս տար. մի՞թէ չե՞ս լսեր՝ որքան բաներ կասեն սոքա քեզի դէմ։ Իսկ Յիսուս նորա խօսքին ամենեւին չպատասխանեց. այնպէս որ դատաւորը շատ զարմացաւ։

Անգին Հրեաները չարախօսութիւն անելէն չէ՛ին դադրեր. ժողովրդեան մէջ խռովութիւն կձգէ՝ կասէին, եւ ծուռ բաներ կսովրեցընէ ամենուն ամէն տեղ՝ Գալիլիայէն սկսած մինչեւ Երուսաղէմ: Պիղատոս երբոր իմացաւ թէ Յիսուս Գալիլիացի է, հրամայեց որ առնուն զինքը՝ Հերովդեսի տանին, որ Գալիլիոյ չորրորդապետը՝ այսինքն կուսակալն էր, եւ այն օրերը Երուսաղէմ եկած էր, ինչպէս որ կերեւի՝ զատկի տօնին համար։

Հերովդէս շատ ուրախացաւ երբոր տեսաւ զՅիսուս. վասն զի անունը շատոնց լսած էր, ու արդեօք ինչ մարդ է ասելով՝ շատ կցանկար զինքը տեսնել. յոյս ալ ունէր որ Յիսուս իւր առջեւը հրաշք մի գործէ, որ ինքը զուարճանայ կամ հաւատայ. այն մարդկանց նման որ չեն ուզեր հաւատոյ այս կամ այն մասին հաւատալ՝ առանց Աստուծոյ մէկ հրաշքը իրենց աչքովը տեսնելու։ Ուստի զանազան պարապ հարցմունքներ արաւ Յիսուսի, բայց նա ամենեւին պատասխան չտուաւ։ Նեղացաւ ունայնամիտ իշխանը. միտքը դրաւ թէ կամ խաբեբային մէկն է Փրկիչն մեր եւ կամ պակասամիտ մարդ. ուստի ծաղր անելու մտքով ճերմակ հագուստ մի ձգել տուաւ վերան — որ խենթերու նշան էր — ու նորէն դարձուց Պիղատոսի։ Հերովդէս ու Պիղատոս մինչեւ այն օրը թշնամի էին իրարու. բայց Հերովդէս կարծելով որ Պիղատոս՝ նորա պատիւը պահելու մտքով յուղարկեր է զՅիսուս, որտին աղէկ եկաւ, եւ այնուհետեւ հաշտուեցան մէկմէկու հետ։

Կանչեց Պիղատոս քահանայապետները, իշխանները ու բոլոր ժողովուրդը, եւ ասաց անոնց. Այս մարդը առիք բերիք ինձի որ իբր թէ ժողովուրդը գլխէ կհանէ. ես ձեր առջեւը քննութիւն արի, ձեր ասած յանցանքներուն նման բան մի չգտայ վերան։ Միայն ես չէ՛, Հերովդէսն ալ չգտաւ, որովհետեւ

նորա յուղարկեր էի զինքը։ Ցայսնի է ուրեմն որ մեռնելու արժանի յանցանք մի գործած չունի. խրատեմ զինքը ծեծով ու արձկեմ։ Երբոր նոքա չհաւանեցան, մտածեց Պիղատոս թէ Հրէից մէջ սովորութիւն կայ որ ամէն տարի զատկին օրը մէկ յանցաւորի մի անունը կուտայ ժողովուրդը, եւ դատաւորը բանտէն կհանէ կարձկէ այն մարդը։ Նոյն միջոցին անուանի մարդասպան աւազակ մի կար բանտը՝ անունը Յեսու Բարաբբա։ Պիղատոս ուզելով որ Հրէից քարացեալ սիրտը կակղցընէ ու Յիսուսի վրան գութ շարժէ, ասաց նոցա. Այս երկուքէն որը կուզէք որ արձկեմ ձեզի այս զատկիս. Յեսու Բարաբբան թէ Յիսուսը՝ որ Քրիստոս (մեսիա) կանուանէք։ — Այս խօսքին ժամանակը Պիղատոսի կինը մարդ յուղարկեց անոր ու ասաց. Ձեռքդ քաշէ այդ արդար մարդուն դատաստանէն, վասն զի այս գիշեր սոսկալի երազներ տեսայ ես դորա համար. «Չկայ ինչ քո եւ արդարոյն այնորիկ. զի բազում անցք անցին ընդիս այսօր յանուրջս վասն դորա»։

Քահանայապետներն ու ծերերը խրատ տուին ժողովրդեան որ Բարաբբային արձկուիլը խնդրեն, իսկ զՅիսուս մեռցընեն։ Ուստի ժողովուրդն սկսաւ կանչել թէ Բարաբբան թող արձկուի։ Հարցուց Պիղատոս թէ Հապա ինչ անեմ զՅիսուս. «Իսկ զի՞ արարիցս զՅիսուս զանուանեալն Քրիստոս»։ Ամէնքը մէկէն աղաղակեցին թէ «Խաչեսցի». — Թող խաչուի։ — Յանցանքը ինչ է, ասաց Պիղատոս երկու երեք անգամ։ Նոքա եւս առաւել կանչուըռտելով կասէին, Թող խաչուի։

Այն ատեն Պիղատոսը առաւ զՅիսուս՝ ծեծել տուաւ։ Զինուորներն անով գոհ չլինելով, եւ անշուշտ Հրեաներուն հաճոյքը կատարելու մտքով, վրան ժողովուեցան բազմութեամբ. հագուստը հանեցին, հին քղամիդ՝ այսինքն ծիրանի լաթ ձգեցին կռնակը՝ իբրեւ թագաւորութեան նշան, փուշերով շինած պսակ դրին գլուխը, աջ ձեռքն ալ եղէգ մի տուին գաւազանի

տեղ, սկսան ծաղր անել զինքն ու ասել. «Ողջ կեցէ՛ր, Հրէից թագաւոր»։ Ցեռոյ կթքընէին երեսը, կառնէին ձեռքէն եղէգն ու անով գլխուն կզարնէին, ծնկի վրայ գալով սուտ երկրպագութիւն կանէին առջեւը, եւ ապտակ զարնելով կծեծէին։ Պիղատոս՝ թուլութենէն ալ աւելի անգթութիւնն ու անիրաւութիւնը յայտնի արած էր մինչեւ այն ատենը. դարձեալ յոյս ունէր որ աղատէ զՅիսուս Հրէից ձեռքէն՝ առանց նոցա տհաճութիւն պատճառելու. ուստի առաւ զՓըրկիչն մեր այն խեղճ կերպարանքովը, գլուխը փշե

պսակ, եւ վրան ծիրանի քղամիդ, դուրս հանեց ու ասաց Հրէից. «Ահա այրդ ցձեզ». — ահա ձեզի այս մարդը. ես վրան մէկ յանցանք մի չգտայ։

Քահանայապետներն ու նոցա մարդիկը զՅիսուս տեսածներուն պէս սկսան կանչուրտել. «Ի խաչ հան, ի խաչ հան զդա». — Խաչ հանէ այդ մարդը։ — Դուք առէք, ասաց Պիղատոս, ու դուք խաչեցէք. ես դորա վրայ յանցանք չեմ գտներ։ Հրեաները պատասխանեցին թէ Մեք օրէնք ունիմ. մեր օրինաց զօրութեամբը պէտք է որ մեռնի, վասն զի ինքզինքը Աստուծոյ Որդի անուանեց։ «Մեք օրէնս ունիմք, եւ ըստ օրինաց մերոց պարտի մեռանել, զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար»։ Այս որ լսեց հեթանոս դատաւորը՝ աւելի վախցաւ որ մի գուցէ ինքն ալ Աստուծոյ մէկ պատիժը բերէ իւր գլխուն։ Գնաց նորէն Յիսուսի քովն ու ասաց. «Ուստի ես դու». — Ինչ ցեղէ ես։ Յիսուս պատասխան չտուաւ։ Պիղատոսին ծանր եկաւ այս բանս. «Ընդ իս ոչ խօսիս» ասաց.—ինծի հետ չես խօսիր. չես գիտեր որ իշխանութիւն ունիմ զքեզ խաչ հանելու, եւ իշխանութիւն ունիմ զքեզ արձակելու։ Եւ այս խօսքով ինքզինքը կդատապարտէր անիրաւ դատաւորը. վասն զի եթէ յիրաւի իշխանութիւն ունէր արձակելու անմեղ եւ արդար անձը, ոչ ապաքէն պարտական էր արձակել զինքը, եւ ոչ թէ հրաման տալ որ խաչ հանուի։ Ուստի Տէրն մեր պատասխանեց անոր. Դուն իմ վրաս այդ կարծեցեալ իշխանութիւնն ալ չէիր ունենար՝ թէ որ ի վերուստ Աստուծմէ առած չլինէիր. բայց որովհետեւ ունիմ

կասես, ու ի բարին չես գործածեր իշխանութիւնդ, քեզի համար մեծ մեղք է. իսկ զիս քու ձեռքդ մատնողին մեղքը հարկաւ շատ աւելի մեծ է. «Որ մատնեացն զիս քեզ՝ նորա մեծ մեղք են»։

Պիղատոս Յիսուսի այս խօսքէն շփոթած՝ սկսաւ աւելի աշխատիլ որ արձակէ զինքը։ Հրեայք այն որ տեսան՝ ասին իրեն. «Եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր». — Թէ որ դուն այդ մարդը արձակես, նշան է թէ կայսեր բարեկամ չես. ով որ ինքզինքը թագաւոր կանուանէ՝ թշնամի է կայսեր։ Մեր օրէնքը ոտքի տակ առնող մարդ է ասելէն երբոր շահ չտեսան, ուզեցին քաղաքական օրինաց դէմ յանցա-

ւոր երեւցընել զՅիսուս։ Զարմանքը Հրէից չարամիտ հնարքը չէ, Պիղատոսի երկչոտ ու մարդահաճոյ բնաւորութիւնն է՝ որ այն խօսքով բոլորովին պաշարուեցաւ։ Դուրս հանեց զՅիսուս. ելաւ նստաւ Կապպաթա,

այսինքն Քարայատակ ասուած հրապարակը՝ բարձր աթոռի վրայ, եւ ասաց Հրէից. «Ահա թագաւորդ ձեր ցձեզ». — Ահա ձեր թագաւորը ձեզի։ Նոքա խոկոյն աղաղակեցին. «Բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ եւ հան զդա ի խաչ». — վերցուր մեր մէջէն այդ մարդը, վերցուր՝ խաչ հանէ։— Ես ձեր թագաւորը խաչ հանեմ՝, ասաց Պիղատոս։ — Մեք կայսրէն ի զատ թագաւոր չունիմք, պատասխանեցին Հրեաները. «Զիք մեր թագաւոր՝ բաց ի կայսերէ»։

Տեսաւ Պիղատոս որ պիտի չկարենայ խօսք հասկըցընել Հրէից, եւ քանի կերթայ՝ խռովութիւնը կշատնայ, ջուր բերել տուաւ, լուաց ձեռքերը կեղծաւորութեամբ ժողովրդեան առջեւն ու ասաց. «Քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք». — Ես այդ արդար մարդուն արիւնէն անպարտ եմ. մեղքը ձեր վիզը։ Նոքա ամէնքը միաբերան կանչուրտեցին. «Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց».—Դորա արիւնը մեր վրայ ու մեր զաւակացը վրայ։

Զէին գիտեր ողորմելի Հրեաները թէ ինչ սոսկալի անէծք էր այն՝ որ իրենց բերնովը իրենց քոլոր ազգին ու սերնդոցը վրայ կբերէին. եւ միթէ մինչեւ ցայսօր այն աստուածային անմեղ արիւնը Հրէից ճակատին վրայ կնքոյ պէս դրոշմուած չէ. որով եւ ատելի են այն ամենայն ազգաց՝ թէ քրիստոնէից եւ թէ օտարաց՝ որոց մէջ ցրուած կընակին։

Վերջապէս Պիղատոս ժողովրդեան կամքը կատարել ուզելով՝ Բարաբբան արձըկեց, եւ զՅիսուս ծեծել տալէն յետոյ, ինչպէս որ սովորութիւն էր՝ խաչելու մարդիկը առաջ ծեծել, տուաւ նոցա ձեռքն որ տանին խաչ հանեն։

Խաչի վրայ կախելով կամ գամելով մեռցընելը՝ ուրիշ ամէն տեսակ պատիժներէն աւելի նախատական ու տնարգ կհամարուէր. ուստի միայն չարագործ աշխարհներու պահուած պատիժ էր։ Հրեայք ուզեցին որ Յիսուս ոչ միայն խաչ հանուի, հապա նաեւ ուրիշ երկու աւազակներու հետ ի միասին խաչուի, որպէս զի անոնց հաւասար երեւնայ։ Տուին զինուորներն ահագին խաչափայտը Յիսուսի կրռնակը, եւ առին տարին դէպի Գողգոթա ասուած լեռնակը՝ որ մահապարտներու գլուխը կտրելու տեղ էր։ Ճամբան տեսնելով որ Տէրն մեր սաստիկ չարչարուած լինելով՝ կարողութիւն չունի խաչափայտը տանելու, Սիմոն Կիւրենացի անունով մէկը բռնեցին — որ Յիսուսի ա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ZUUՈ-Арм.ССР

շակերտներէն մէկը կկարծուի, — եւ նորա կռնակը տուին խաչն որ Յիսուսի ետեւէն բերէ։ Ժողովուրդը մեծ բազմութեամբ կերթար այն ողբալի տեսարանը տեսնելու, որը սրտին չարութիւնը պաղեցընելու մտքով, որը պարսաւելի հեռաքրքրութեամբ, որը

միամտութեամբ, որն ալ ցաւակցութեամբ. ինչպէս ահա կասէ տուրբ աւետարանը՝ թէ կանանց բազմութիւնն ալ մեծ էր՝ որ լալով ողբալով կերթային ետեւէն։ Յիսուս դարձաւ ու ասաց նոցա. Ո՛վ Երուսաղեմի զաւակներ, իմ վրաս մի լաք, հապա ձեր վրայ ու ձեր զաւակացը վրայ լացէք. վասն զի օրեր պիտի գան որ դուք եւ նոքա երանի պիտի տաք անղաւակ մայրերուն. լեռներուն պիտի ասէք թէ փլէք ընկէք մեր վրայ, բլուրներուն պիտի ասէք թէ ծածկեցէք զմեզ ձեր ներքեւը. «Զի եթէ ընդ փայտս դալարս զայս

առնեն, ընդ չորն զինչ լինիցի». — թէ որ ինծի պէս կանանչ ու մարչ փայտին (այսինքն անմեղ եւ անարատ անձին) գլուխը այս բաները կուգան, հապա չորին (մեղաւորներուն) գլխուն ինչեր կան գալիք։ Ինչպէս որ եղաւ նոցա՝ Երուսաղեմի պաշարման ու առման ժամանակը։

Սովորութիւն մի կար որ մահապարտները խաչ հանելէն առաջ՝ գինի կխմցընէին նոցա, որպէս զի քիչ մը աւելի երկար գիմանան այն ցաւերուն որ պիտի քաշէին։ Հրեայք գինիին մէջ լեղի խառնեցին, հետն ալ զմուռ, որպէս զի աւելի կարուկ ու սաստիկ լինի խմելիքը, եւ երբոր Գողգոթա հասան՝ տուին որ խմէ. Յիսուս համն որ առաւ՝ չկամեցաւ խմել՝ որպէս զի ցաւերուն սաստկութիւնը չպակսեցընէ։

Կէսօրուան երեք ժամ մնացած էր, խաչ հանեցին զՅիսուս. հետն ալ երկու աւազակ խաչեցին, մէկը աջ գին եւ միւսը ձախ կողմը։ Յիսուս այն վերջին ժամանակն ալ իւր անբաւ մարգասիրութիւնը եւ անոխակալութիւնը ցուցընելով ասաց առ Հայրն երկնաւոր. «Հայր, թող գոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն». — Հայր իմ, թողութիւն տուր, ներէ սոցա, վասն զի չեն գիտեր՝ ինչ է արածները. այնպէս կուրցեր են տաելութեամբ որ չեն կրնար ըստ արժանւոյն հասկընալ իրենց անօրէնութեան, անիրաւութեան եւ անգթութեան ծանրութիւնը։

Խաչահանու զինուորաց գլխաւորները չորս հոգի էին։ Սոքա զՅիսուս խաչելէն ետքը առին հագուստները, չորս կտոր արին ու բաժնեցին մէջերնին. իսկ

պատմուճանը կամ կապան՝ որ անկար էր վերէն ի վար, ասին իրարու որ չպատռեմք, հապա վիճակ ձգեմք, ում որ ելնէ՝ անորը թող լինի։ Այս բանս ալ արդէն մարգարէացած էր Դաւիթ, որ կասէ սաղմոսին մէջ Քրիստոսի ըներնէն. «Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս, եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին». — Հագուստներս իրենց մէջ բաժնեցին, ու կապայիս վրայ վիճակ ձգեցին։

Պիղատոս տախտակի մի վերայ այս խօսքերս գրեց երեք լեզուաւ, այսինքն հրեարէն, լատիներէն ու յունարէն, եւ խաչին գլուխը գամել տուաւ. ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷԻՑ։ Քահանայապետներն ասին Պիղատոսի թէ թագաւոր Հրէից մի գրեր, հապա գրէ թէ ինքզինքը թագաւոր Հրէից անուանեց։ Պատասխանեց Պիղատոս. «Զոր ինչ գրեցի՝ գրեցի». — Գրածս գրած է, փոխել չեմ ուզեր։

Երբոր ժողովուրդը կեցած կնայէր, ոմանք Յիսուսի առջեւէն կանցնէին կդառնային, ու ծաղր անելով՝ գլուխնին շարժելով կասէին. Ախոռ քեզի. դուն որ տաճարը պիտի քակէիր ու երեք օրէն պիտի շինէիր, ինքզինքդ ազատէ տեսնեմք. թէ որ Աստուծոյ Որդին ես՝ այդ խաչէն վար իջիր։ Քահանայապետներն ու կարգացողներն ալ նոյնպէս հեգնելով կասէին. «Զայլս ապրեցոյց, զանձն ոչ կարէ ապրեցուցանել». — Ուրիշները ազատեց զանազան հիւանդութիւններէ ու մահուանէ, ինքզինքը չկրնար ազատել. ուր է տեսնեմք, թող այդ մեսիան՝ Հրէից թագաւորը իջնայ այժմ խաչէն, իսկոյն կհաւատամք իրեն. թէ որ յոյ-

սը Աստուծոյ վրայ էր, թող Աստուած ազատէ զինքը՝ թէ որ իրեն հաճոյ եւ ընդունելի մարդ է. որովհետեւ ինքը ասաց թէ ես Աստուծոյ Որդին եմ։ Զինուորներն անգամ ծաղրելով կասէին. Թէ որ դուն ես Հրէից թագաւորը, ինքզինքդ ազատէ։ Մինչեւ Յիսուսի հետ խաչուած աւազակներուն մէկը անգագար կհայհոյէր զՅիսուս ու կասէր. «Ո՞չ դու ես Քրիստոսն. փրկեա զանձն քո եւ զմեզ». — Միթէ դուն մեսիան չես. ազատէ ինքզինքդ, զմեզ ալ ազատէ։ Միւս աւազակը սաստեց ընկերոջն ու ասաց. «Զերկընչիս դու զԱստուծոյ, զի ի նմին պատժի կաս». — Աստուծմէ չես վախնար դուն, որ մի եւ նոյն պատիժը կքաշես։ Մեք յիրաւի մեր արածներուն փոխարէնը արժանապէս կքաշեմք. իսկ սա ամենեւին դէշ բան մի արած չունի։ Այնչափ լուսաւորուեցաւ հետզհետէ բարի աւազակին միտքն որ ճանչցաւ Քրիստոսի ով լինելն ու ասաց Յիսուսի. «Յիշեա զիս Տէր՝ յորժամ գայցես արքայութեամբ քով». — Տէր իմ, երբոր քու թագաւորութեամբդ նորէն աշխարհք գաս, զիս մի մոռնար։ Յիսուս պատասխանեց անոր. «Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին». — Հաւատա ինծի որ այսօր հետս պիտի լինիս արդարոց երանաւէտ կայանքը՝ յաւիտենական կենաց հանգըստութեանը մէջ։

Խաչին քովը կեցած էին Յիսուսի մայրը, եւ մօրաքոյրը (այսինքն Յակոբեփայ Աստուածահօր Կղէոփասի եղբօրը կինը) Մարիամ Կղէոփասայ եւ Մարիամ Մագդալենացի։ Յիսուս տեսնելով իւր մայրն ու սիրելի

աշակերտը Յովհաննէս, որ մօտ կեցած էր, ասաց մօ-
րը. «Կին դու, ահա որդի քո». — Մայր իմ, ես մեռ-
նելու վրայ եմ. ահա քեզ իմ տեղս որդի Յովհաննէ-
սը։ Յետոյ ասաց աշակերտին. «Ահա մայր քո». —
Ահա սա քեզի մօր տեղ թող լինի, եւ իմ տեղս դուն
հոգաս զինքը։ Այն ժամանակէն աշակերտը իւր քովն
առաւ զՏիրամայրը. որով յայտնի է թէ Աստուածա-
հայրն Յովսէփ արդէն վախճանած էր։ Տարակոյս չը-
կայ որ նաեւ ամենայն ճշմարիտ քրիստոնեայ իրա-
ւունք ունի յուսալու թէ խաչելեալ Փրկիչն մեր իւր
ամենասուրբ մօրը խնամոցն ու պաշտպանութեանը
յանձներ է միշտ զինքը ու կյանձնէ. «Ահա որդի քո».
երանի մեզի՝ եթէ լեմք եւ հասկընամք նաեւ մեզի
ասած խօսքին զօրութիւնը թէ «Ահա մայր քո»։

Վեցերորդ ժամ՝ այսինքն կէսօր որ եղաւ, մութ
կոխեց՝ խաւար ծածկեց բոլոր երկրիս երեսը՝ մինչ-
չեւ իններորդ ժամը. արեւը բռնուեցաւ՝ սովորա-
կան խաւարումներէն դուրս կերպով։ Իսկ իններորդ
ժամուն, այսինքն կէսօրէն երեք ժամ ետքը, Յի-
սուս բարձր ձայնով կանչեց հրեարէն. «Էլի Էլի,
լամա սաբաքթանի». որ սաղմոսին մէկ խօսքն է, եւ
կնշանակէ, Աստուած իմ, Աստուած իմ, ինչու թո-
ղուցիր զիս։ Մօտ կեցող զինուորները հռովմայեցի
լինելով, եւ լաւ չհասկընալով հրեարէնը՝ ասին իրա-
րու թէ Եղիա մարգարէն օգնութեան կկանչէ։ Յի-
սուս տեսնելով որ ամէն մարգարէութիւնները կա-
տարուեցան, Սաղմոսին մէկ ուրիշ խօսքն ալ տե-
ղը տանելու համար ասաց «Ծարաւի եմ»։ Այն տեղ

ամանով մի քացախ կար. զինուորներէն մէկը վա-
զեց, սպունգ մի թրջեց այն քացախով, վրան լեղի
թափեց, փաթթեց զոպայով՝ որ ծորիւն ասուած
խոտն է, եղեգի մի ծայրը անցուց եւ երկընցուց
Յիսուսի որ ծծէ. մինչդեռ ուրիշները կասէին զի-
նուորին թէ Թող տուր՝ տեսնեմք, կուգայ Եղիան
զինքը խաչէն վար առնելու։ Յիսուս նորէն բարձր
ձայնով աղաղակեց ու ասաց. «Հայր, ի ձեռս քո ա-
ւանդեմ զհոգի իմ». — Հայր իմ, քու ձեռքդ կա-
ւանդեմ իմ հոգիս։ Այս ասելէն ետքը վար ծռեց
աստուածային գլուխն ու աւանդեց սուրբ հոգին։

Իսկոյն տաճարին վարագոյրը վերէն վար ճեղքուե-
ցաւ, գետինը շարժեցաւ, մեծամեծ քարերը պա-
տռտեցան, գերեզմանները բացուեցան եւ շատ ար-
դար մարդկանց մարմիններ յարութիւն առին, ու
Յիսուսի յարութիւն առնելէն ետքը շատերուն երեւ-
ցան վկայութիւն տալով որ յիրաւի յարութիւն ա-
ռաւ Փրկիչն մեր։

Իսկ հռովմայեցի զինուորներուն գլխաւորը, որ
հարիւրապետ էր, երբոր տեսաւ այն ահաւոր երե-
ւոյթները, եւ Յիսուսի այն կերպով հոգին աւանդելը,
հաւատաց որ Յիսուս արդար էր, մեսիան էր, Աս-
տուած եւ Որդի Աստուծոյ. «Արդարեւ այրս այս ար-
դար էր եւ Որդի Աստուծոյ»։ Ժողովուրդներն ալ
սարսափած՝ սկսան տրամութեամբ ու ողջոյնի գա-
լով՝ ձեռքերնին կուրծքերնուն զարնել, եւ դառնալ
իրենց տները. «Բախէին զկուրծս իւրեանց եւ դառ-
նային»։

Հրէից օրէնքը արգիլած էր որ ինչ եւ իցէ մեռած մարմին առանց թաղելու չմնայ գիշերը. եւ որովհետեւ օրն ալ ուրբաթ էր, եւ երկրորդ օրը շաբաթ ու զատիկ միանգամայն, ուստի գնացին Հրեայք Պիղատոսի աղաչեցին որ հրաման տայ խաչի վրայ կախուած մարմնոց ծունկերը ջարդելու, որպէս զի շուտով մեռնին։ Զինուորներն եկան, երկու աւազակներուն ծունկերը ջարդեցին. իսկ երբոր Յիսուսի մօտեցան, տեսան որ դեռ նոր վախճանած էր, չջարկին. հապա զինուորներէն մէկը (որ Ղունկիանոս կասուէր) ձեռքի տէգովը խոցեց Յիսուսի կողը, եւ իսկոյն արիւն եւ ջուր ելաւ կողէն։ Տարակոյս չկայ որ Յիսուսի մեռած մարմնէն արիւն եւ ջուր բղխիլը հրաշքով էր, եւ նշան էր ջուրը մկրտութեան խորհրդոյն, եւ արիւնը՝ սուրբ հաղորդութեան, ինչպէս որ կմեկնեն սուրբ վարդապետները, եւ ինչպէս Շնորհալի հայրապետն մեր կասէ.

„Քարոզի ի սքանչելեաց՝ Աստուած մարմնով վասն իմ խաչեալ.
Մերով բնութեամբրս մեռանի, Աստուած անմահ խոստովանի.
Կբրկնավրտակ կողին աղբերքք Եկեղեցի իւր հաստատի.
Ջրովքն մ.. քրի, զարիւնն ըմպէ, զՈրդի ընդ Հօր փառաւորէ“։

Իրիկուան դէմ Յովսէփ անունով Արեմաթացի բարեպաշտ իշխանը, որ Յիսուսի ծածուկ աշակերտներէն մէկն էր, գնաց խնդրեց Պիղատոսէն որ հրաման տայ իրեն Յիսուսի մարմինը խաչէն վար առնելու թաղելու։ Պիղատոս զարմացաւ Յիսուսի այնպէս շուտ մեռածին վրայ, վասն զի անով կհասկընար թէ ինչ սոսկալի չարչարանք քաշեր էր Հրեաներէն՝ խաչուելէն առաջ ու ետքը. քովը կանչեց հարիւրապետը, հարցուց իմացաւ որ յիրաւի այնպէս շուտով մեռեր է, եւ հրամայեց որ տան Յովսեփայ Յիսուսի մարմինը։

Յովսեփայ հետ եկաւ նաեւ Նիկոդեմոս, որ նոյնպէս Յիսուսի հետեւող իշխաններէն մէկն էր. հարիւր լիտրի չափ զմուռ՝ հալուէ եւ ուրիշ խնկեղէններ բերաւ. նոր ու մաքուր կտաւներ առին, իջեցուցին խաչէն Յիսուսի մարմինը, եւ անոնցմով պատեցին՝ ինչպէս որ Հրէից սովորութիւնն էր։ Յիսուսի խաչուած տեղին մօտ պարտէզ կար, պարտիզին մէջ ալ նոր գերեզման մի՝ քարի մէջ փորուած, այն գերեզմանը դրին Յիսուսի անապական մարմինը, ագին քար մի ալ գլորեցին՝ փակեցին անով գերեզմանին բերանն ու գնացին։

Երկրորդ առաւօտը, որ շաբաթ էր, գնացին Հրէից քահանայապետներն ու փարիսեցիները Պիղատոսին,

Տէր ասին, մաքերնիս ընկաւ որ այն մոլորեցուցիչը ողջութեան ատենը ասած էր թէ Երեք օրէն յարութիւն պիտի առնում. ուրեմն հրամայէ որ զինուորները պահպանութիւն անեն գերեզմանին մինչեւ երեք օր. չլինի թէ աշակերտներն երթան գիշերով՝ գողնան մարմինը գերեզմանէն ու ձայն հանեն ժողովրդեան մէջ թէ յարութիւն առաւ, կենդանացաւ. որով ժողովրդեան ետքի մոլորութիւնը առաջինէն ալ գէշ կլինի։ Պիղատոս ձանձրացած լինելով Հրէից անխիղճ եւ անգութ հնարքներէն՝ պատասխանեց անոնց. Զինուորներ ունիք ձեր ձեռքին տակը. գնացէք պահպանութիւն արէք ինչպէս որ գիտէք. նոքա գնացին՝ գերեզմանին վրայ իրենց կնիքը զարկին, ու քովը քանի մի զինուորներ պահապան գրին։

Այս է ահա այսօրուան ահաւոր եւ սքանչելի ասնին խորհուրդը՝ ինչ կերպով որ սուրբ աւետարանին մէջ կպատմուի։ Աւետարանին ամէն մէկ խօսքը մէկ-մէկ ընդարձակ քարոզի նիւթ է, եւ աղբիւր զանազան խրատուց որ բարեպաշտ քրիստոնեայք պէտք է անպատճառ քաղեն այսպիսի տօնախմբութենէ. բայց մեք բաւական համարիմք միայն այսքանը, եւ վերջացընեմք այսօրուան լսարանը՝ բացատրելով Աւագ Ուրբաթուս գլխաւոր արարողութիւնները։

Գիշերային ժամերգութեան սկիզբները աւագ սեղանին վրայ տասուերկու կերոն կվառուի, մէկ կերոն ալ մէջտեղը։ Այս արարողութիւնը փոքր տարբերութիւններով կգտնուի նաեւ ուրիշ քրիստոնէից եկեղեցիներուն մէջ. որով կիմացուի թէ շատ հին սովորութիւն է։ Կերոններուն խորհուրդը թէպէտ զանազան կերպով կհասկընան ոմանք, բայց ամենէն հաւանական կարծիքն այս է թէ մէջտեղինը օրինակ է Քրիստոսի Տեառն մերոյ, միւսները տասուերկու առաքելոց։ Այն միջոցին վեց գլուխ աւետարան կկարդացուի՝ Քրիստոսի մատնութեանն ու չարչարանացը վրայ, իւրաքանչիւրէն առաջ սաղմոսներ ասուելով, եւ «Այսօր անճառ» շարականին վեց վեց տուները երգուելով. եւ ամէն մէկ աւետարանին վերջանալուն՝ սեղանոյն վրայի կերոններէն երկերկու հատ կանցընեն կմարեն, առաքելոց փախչելուն կամ ցրուելուն նշան, եւ կմնայ միայն մէջտեղինը։ Իսկ երբոր Տէր յերկնից շարականին երկրորդ տունը կերգեն որ կասէ թէ «Տեսեալ զՏէրն ի խաչին՝ խաւարեցաւ արեգակն», այն կերոնն ալ կտանին սեղանին տակը, եւ խաւարում կլինի եկեղեցւոյն մէջ։ Խաւարման ժամանակը ըստ ինքեան անմիջապէս Փառք ի բարձունս վսեմ առաքելական երգը պիտի երգեցուի ծանր եւ զանակով ու ցած ձայնով. բայց մեր եկեղեցին գրեթէ ամէն տեղ կներէ ոչ միայն ողբական քարոզ մի տալ ժողովրդեան առաջ, այլ եւ Տէր ողորմեա երգել, եւ սրտաշարժ ողբեր ասել ի յորդոր ջերմեռանդութեան բարեպաշտից։ Յետոյ երբոր Փառք ի բարձունսին վերջի տունը երգելու տեղն կասուի, «Ծագեա՛ զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ Տէր», սեղանին եռեւի կերոնը դուրս կհանեն, եւ ժամերգութիւնը առաջ կտանին։

Կէսօրէն երեք ժամ առաջ կկատարուի Քրիստոսի Խաչելութեան եւ մահուան ժամերգութիւնը՝ սաղմոսներով, ընթերցուածներով, շարականներով եւ չորս գլուխ աւետարան կարդալով, որոց ամէն մէկուն խօսքերն ու խորհուրդները չեմք կրնար այսօր բացատրել։ Իսկ իրիկունը՝ արեւուն մայրը մտած ժամանակը երեկոյեան ժամերգութենէն ետեւ կկատարուի Քրիստոսի թաղման հանդէսը եւ նախատօնակը՝ սուրբ խաչը մաքուր եւ բարակ կտաւով պատած՝ թափօրով քալցընելով եկեղեցւոյ մէջ կամ եկեղեցւոյն մօտերը։

Աւագ ուրբաթու ժամերգութեանց վերջերը այս գեղեցիկ արարողութիւնս ալ կայ որ «Խաչի քո Քրիստոս» հին ու գեղեցիկ շարականին երգուած միջոցին ժողովուրդը կշամբուրէ սուրբ Խաչն ու աւետարանը, եւ այնպէս կարձակուի։ — Համբուրեմք ուրեմն եւ մեք ամենայն ջերմեռանդութեամբ եւ արտասուօք այն սուրբ խաչը՝ որոյ վրայ մեռաւ մեր մեղաց համար Քրիստոս Փրկիչն մեր. «Եկայք հաւատացեալք՝ երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն, ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգեւս աշխարհի»։ Ցիրաւի անգին պարգեւ շնորհեց այս աշխարհիս մէջ՝ եւ ի հանդերձեալն պարգեւ յաւիտենական փառաց եւ անսպառ երջանկութեան. որում արժանի անէ զմեզ ինքն Խաչելեալ Փրկիչն՝ ասելով իւրաքանչիւրոցս՝ ինչպէս որ ասաց երանեալ աւազակին, «Այսօր ընդ իս իցես ի դրախտին»։ Նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Որովհետեւ այս հրատարակութեանս նիւթերը երկու գլխաւոր խումբ կբաժնուին, մէկը *կրօնական* եւ միւսը *արտաքին*, արժան դատեցինք՝ անուններով եւս զանազանել ասոնք իրարմէ, եւ կրօնականներուն վրայ աւելցընել ՔԱՐՈԶ անունը։ — Ցայտնի բան է որ այս զանազանութեամբ մեր աշխատասիրութեան ոչ նպատակը կփոխուի, ոչ լեզուն եւ ոչ ոճը. վասն զի *քարոզ* անուանածներս ալ՝ գէթ ըստ մեծի մասին՝ պիտի լինին դարձեալ ընտանեկան ոճով պատմուած հոգեշահ պատմութիւններ, եւ առանց ճարտասանական զարդարանքներու տրուած խրատներ ըստ աւուրց պտտշաճի. իսկ *շարանները* կմնան նոյնպէս պարզ եւ դիւրիմաց ոճով եղած բացատրութիւններ առ հասարակ ուսումնական, պատմական, աշխարհագրական, եւ ուրիշ արտաքին օգտակար տեղեկութեանց։

ԳԱԲՐ. ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ.

Առաջ Երկուշաբթի.
Առաջ Երեքշաբթի.
Առաջ Չորեքշաբթի.
Երուսաղեմի առումն ու տաճարին կործանումը.
Կոստանդնուպոլսոյ առումն յՕսմանեանց.
Առաջ Հինգշաբթի.
Առաջ Ուրբաթ.

ՊԱՏՐԱՍՏՔ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Զատիկ սուրբ Յարութեան Տեառն.
Համբարձումն.
Հոգեգալուստ.
Վարդավառ.
Վերափոխումն.
Սուրբ Խաչ.
Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն.
Տեառնընդառաջ.
Բուն Բարեկենդան.
Սուրբ Հռիփսիմեանք.
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.
Որդիք եւ թոռունք սրբոյ Լուսաւորչին.
Մեծն Ներսէս Պարթեւ.
Սուրբ Սարգիս Զօրավար.
Սուրբ Մինաս.
Սուրբ Անտոն ճգնաւոր.
Յոր երանելի.
Թադէոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.
Ժամ եւ Ժամերգութիւն.

Երկինք.
Արեւն ու Մոլորակները.
Ջերմութիւն եւ Ջերմաչափ.
Մետեորագիտութիւն, կամ Գուշակութիւնք օդոց.
Արջիւնք եւ Սեղուք.
Տնտեսութիւն.
Եգիպտոսի հնութիւնները, եւ այլն:

Գին խրատանչիւր տետրակի **20** *ղուռ.*

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ